ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանի և Նախարարության արտաքին կապերի և ծրագրերի վարչության պետի տեղակալ Վիոլետա Աղաջանյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

  Գեղամ Վարդանյան, Վիոլետա Աղաջանյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության Արտաքին կապերի և ծրագրերի վարչության պետի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2019 թվականի մարտի 26–28-ը

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

  Մի շարք պետական գերատեսչությունների և խոշոր ընկերությունների հետ կապի, բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների, արդյունաբերության և տիեզերական գործունեության բնագավառում համագործակցության հաստատում

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

  Վերոնշյալ այցի ընթացքում ընթացքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան հետևյալ ՌԴ պատվիրակությունների հետ.

- ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարություն,
- ՌԴ թվային զարգացման, կապի և զանգվածային հաղորդակցության նախարարություն,
- «Ռոսկոսմոս» պետական կորպորացիա,
- Եվրասիական տնտեսական միության ներքին շուկաների, տեղեկատվայնացման, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների դեպարտամենտ,
- «РВК» բաժնետիրական ընկերության կառավարում (Правление АО «Российская венчурная компания»),
- Տիեզերական գործունեության մասնակիցների միջազգային ասոցիացիա («МАКД»),
- Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանություն:

Հանդիպման օրակարգում ներկայացված հարցերի ոլորտներին առնչվող ներկայացուցիչներից կազմված ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարության պատվիրակությունը գլխավորում էր նախարարի տեղակալ Օլեգ Ռյազանցևը:

Հանդիպման ընթացքում ՀՀ պատվիրակության ղեկավար Գեղամ Վարդանյանը խոսեց և առաջարկություններով հանդես եկավ հետևյալ թեմաների շուրջ.

- Հայաստանի և Ռուսաստանի միջև նորարական ձեռնարկությունների համագործակցության համար մեխանիզմների կառուցում,
- Ներմուծման փոխարինման ոլորտում (импотозамещение) համատեղ աշխատանքներ,
- Էլեկտրոնային բաղադրիչային բազայի (ЭКБ) թեստավորում
- Վարորդին աջակցության ժամանակակից միջոցների (ADAS) ոլորտում համատեղ աշխատանքներ,
- Գերբարձր հաճախականության (СВЧ) բաղադրիչների, բլոկերի և համակարգերի և թեստավորում,
- Արդյունաբերական իրերի ինտերնետ (IIOT),
- Համագործակցություն «Ինժեներական քաղաքի» («Engeneering City») հետ:

Օ. Ռյազանցևը ողջունեց առաջարկվող համագործակցությունը՝ նշելով, որ մինչ այսօր ՀՀ և ՌԴ միջև չկան որևէ պայմանավորվածություններ ներկայացված հարցերի շուրջ, ինչպես նաև շեշտելով, որ երկու երկրների միջև կա մեծ ներուժ փոխգործակցության ընդհանուր մոտեցումների, համատեղ նախագծերի իրականացման ուղղությամբ: Նա նաև ընդգծեց, որ ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը հանդիսանում է առաջատարը բարձր տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտներում, և ռուսական կողմը սիրով կորդեգրի հայկական փորձը նշված բնագավառներում:

Հայկական պատվիրակության կողմից ներկայացրած հարցերի քննարկումից հետո Օլեգ Ռյազանցևը իր հերթին առաջարկեց ռուսական կողմի հարցերը.

- Ռուսական արտադրության «ԻԺ» մակնիշի էլեկտրական մոտոցիկլի մատակարարման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության, ապա ՀՀ-ի միջոցով նաև այլ երկրներ,
- Քաղաքացիական ավիացիայի համար նախատեսված «Սուխոյ Սուպերջեթ» մակնիշի ինքնաթիռի և փոքր ավիացիայի համար նախատեսված «Սիգմա» մակնիշի բազմանպատակային ինքնաթիռի մատակարարման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության, ապա ՀՀ-ի միջոցով նաև այլ երկրներ,
- Ռուսական արտադրության օդային երթևեկության կառավարման ավտոմատացված համակարգի մատակարարման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության, ապա ապա ՀՀ-ի միջոցով նաև այլ երկրներ,
- Համագործակցություն «Էրա Գլոնասի» հետ:

Դիտարկելով առաջադրված թեմաները՝ Գեղամ Վարդանյանը ողջունեց առաջարկվող հնարավոր համագործակցությունը և առաջարկեց «ԻԺ» մակնիշի էլեկտրական մոտոցիկլի

հավաքը կազմակերպել Հայաստանի Հանրապետությունում, իսկ ինքնաթիռների հարցը ներկայացնել ոլորտի համապատասխան ներկայացուցիչների քննարկմանը:

Օ. Ռյազանցևը նաև ներկայացրեց ՌԴ-ում իրականացվող «Խելացի քաղաք և խելացի տուն» նախագիծը, որն իրենից ներկայացնում է առևտրային և բնակելի անշարժ գույքի, ինչպես նաև սոցիալապես կարևոր քաղաքային ենթակառուցվածքի օբյեկտների համար տեխնոլոգիական նորույթներ և նորարական լուծումներ: Այն նպատակաուղղված է բնակավայրերի կառավարման ինտեգրացված ավտոմատացված համակարգի ստեղծմանը: Նախարարի տեղակալը հայտնեց, որ այսօր «Խելացի քաղաք և խելացի տուն» նախագծի բազմաթիվ լուծումները, այդ թվում՝ նորարարական և բարձր տեխնոլոգիական լուծումները, իրականացնում է չինական «Շվաբե» ընկերությունը: Նա կոչ արեց նաև հայկական ինժեներական ընկերություններին համագործակցել այդ նախագծի շուրջ:

ՌԴ թվային զարգացման, կապի և զանգվածային հաղորդակցության նախարարի տեղակալ Միխայիլ Մամոնովի պատվիրակության հետ հանդիպման ընթացքում քննարկվել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում՝

- Ռուսաստանի Դաշնության տարածքում հայկական արտադրանքի «Արմֆոն» սմարթֆոնների և «Արմթաբ» պլանշետների լիցենզավորումը,
- Հաջորդ սերնդի ցանցերի կարգավորման շուրջ համատեղ աշխատանքներ,
- Հայկական ՏՏ ընկերությունների ընգրկումը ծրագրային ապահովման գրանցամատյանում որպես ԵԱՏՄ մասնակից-պետություն,
- Պիլոտային նախագծերի մշակումն ու իրականացումը թվային զարգացման ոլորտում,
- Արբանյակային ծառայությունների ռեսուրսները:

Նախարարի տեղակալ Միխայիլ Մամոնովը ողջունել է ՌԴ տարածք հայկական արտադրանքի «Արմֆոն» սմարթֆոնների և «Արմթաբ» պլանշետների ներմուծումը՝ հայտնելով, որ տվյալ արտադրանքի լիցենզավորման գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ է դիմել ՌԴ տնտեսական զարգացման նախարարության ենթակայության ներքո գործող Դաշնային հավատարմագրման ծառայությանը (Росаккредитация) և ստանալ թույլատրող փաստաթղթերը:

Որոշվեց փոխանակվել Հայաստանում և Ռուսաստանում տիրող իրավիճակի մասին տեղեկատվությամբ, պայմանավորվել միասնական սկզբունքների ստեղծման վերաբերյալ և ստեղծել համատեղ աշխատանքային փորձագիտական խումբ՝ կազմված երկու գերատեսչությունների համապատասխան մասնագետներից:

Խոսելով հայկական ՏՏ ընկերությունների ընգրկման մասին ծրագրային ապահովման գրանցամատյանում, որպես ԵԱՏՄ մասնակից-պետություն՝ Մ. Մամոնովը ներկայացրեց իրենց կողմից ձևավորվող ծրագրային ապահովման գրանցամատյանի ընթացքը՝ հայտնելով, որ ս.թ. փետրվարին փաստաթղթում կատարվել են համապատասխան փոփոխությունները և ՀՀ ՏՏ ընկերությունները կընդգրկվեն, որպես ԵԱՏՄ մասնակից-պետություն:

Անդրադառնալով թվային զարգացման ոլորտին՝ Կողմերը կրկին պայմանավորվեցին ստեղծել համատեղ աշխատանքային խումբ՝ պիլոտային նախագծերի մշակման և իրականացման նպատակով:

Հանդիպման ավարտին Միխայիլ Մամոնովը Գեղամ Վարդանյանին խնդրեց դիտակել Հայաստանի համար արբանյակային ծառայությունների ռեսուրսների մատակարարման հարցը և տեղեկացրեց, որ վերջինիս անհրաժեշտության դեպքում «Տիեզերական կապ» պետական կորպորացիան (ԳՊԿՀ) պատրաստակամ է համագործակցության եզրեր հաստատել:

ՀՀ պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաև «Ռոսկոսմոս» պետական կորպորացիայի պատվիրակության հետ, որը ռուսական կողմից ղեկավարում էին գլխավոր տնօրենի երկու տեղակալները՝ տիեզերական համալիրների և համակարգերի գծով տեղակալ Միխայիլ Խայլովը և միջազգային համագործակցության գծով տեղակալ Վալենտին Սավելևը:

Հանդպման ընթացքում կողմերը քննարկեցին «Ռոսկոսմոս»-ի հնարավոր համագործակցությունը «Ինժեներական քաղաք»-ի (Engeneering City) հետ, ՀՀ ինժեներական կազմակերպությունների հնարավորությունների ներկայացումը ավիատիեզերական բնագավառում, ինչպես նաև էլեկտրոնային բաղադրիչների բազայի (ԷԿԲ) թեստավորման համակարգերում, ռուսական տիեզերական սարքավորումներից Երկրի հեռակա զոնդավորման տվյալների ընդունման և այդ տվյալները հայկական կողմին տրամադրման նպատակով Երևանում տիեզերական մոնիթորինգի կենտրոնի արդիականացմանն առնչվող աշատանքների իրականացման ընթացիկ վիճակը:

ՀՀ նախարարի տեղակալ Գ. Վարդանյանի կողմից ներկայացվել է հայկական կազմակերպությունների ներուժը, ինչպես նաև առաջարկվել է միկրոէլեկտրոնային արտադրանքի թեստավորման ուղղությամբ հնարավոր համագործակցություն:

«Ռոսկոսմոս»-ի ներկայացուցիչները խնդրեցին վերոնշյալի մասին տրամադրել հակիրճ առաջարկություններ դրանց հստակ քննարկման նպատակով:

«Սկոլկովո» Հիմնադրամի տարածքում կայացավ ՀՀ պատվիրակության հանդիպումը «ՐՎԿ» ԲԸ կառավարման (АО Правление «Российская венчурная компания») բարձրաստիճան ներկայացուցիչների հետ: Ընկերությունն իրենից ներկայացնում է հիմնադրամների պետական հիմնադրամ և Ռուսաստանի Դաշնության վենչուրային շուկայի զարգացման ինստիտուտ՝ ազգային նորարարական համակարգի կառուցման պետական միջոցներից մեկը:

Հանդիպման ընթացքում իր խոսքում նախարարի տեղակալ Գ. Վարդանյանը «ՐՎԿ» ԲԸ կառավարման տնօրենի տեղակալ, նորարարական ենթակառուցվածքի զարգացման գծով տնօրեն Միխայիլ Անտոնովին տեղեկացրեց Հայաստանի Հանրապետությունում վենչուրային հիմնադրամի ստեղծման մասին, ինչպես նաև նշեց, որ հայկական կողմը շատ է կարևորում ռուսական կապիտալի մասնակցությունը նշյալ հիմնադրամում:

Մ. Անտոնովը ողջունեց նախագիծը և հայտնեց, որ իրենք անպայման կդիտարկեն ռուսական վենչուրային ընկերության մասնակցությունը հայկական հիմնադրամում LP (սահմանափակ գործընկերություն) հիմունքներով: Նա նաև իրենց պատրաստակամությունը հայտնեց հնարավոր համագործակցության եզրեր գտնելու հարցում՝ ներգրավելով

վենչուրային հիմնադրամի ստեղծման նպատակով երկու պետությունների փորձի փոխանակումը:

«ՐԲԿ» ԲԸ կառավարման տնօրենի տեղակալն իր հերթին ներկայացրեց շնորհանդես իրենց ընկերության գործունեության վերաբերյալ:

Գ. Վարդանյանը նաև խոսեց «Ինժեներական քաղաք»-ի (Engeneering City) և ՀՀ-ում գործող տեխնոպարկերի մասին, ինչը նույնպես մեծ հետաքրքրություն առաջացրեց ռուսական պատվիրակության մոտ: Մ. Անտոնովը նշեց, որ այս ուղղությամբ ևս կա հնարավորորություն ներդրումների կատարման համար:

Մեծ կարևորություն ուներ ՀՀ պատվիրակության հանդիպումը Եվրասիական Տնտեսական Միության ներքին շուկաների, տեղեկատվայնացման, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների Կոլեգիայի անդամ (նախարար) Կարինե Մինասյանի հետ:

Երկու կողմերի միջև քննարկվեցին հետևյալ հարցերը.

- Խոչընդոտների վերացումը ներքին շուկայում արտադրանքի ազատ ներմուծման և արտահանման համար,
- Հաջորդ սերնդի ցանցը կարգավորման շուրջ համատեղ աշխատանքներ,
- ԵԱՏՄ-ի թվային օրակարգի նախագծերում հայկական ընկերությունների ներգրավումը և աջակցությունը,
- Հայկական ՏՏ ընկերությունների ընգրկումը ծրագրային ապահովման գրանցամատյանում, որպես ԵԱՏՄ մասնակից-պետություն:

Կարինե Մինասյանը կոչ արեց հայկական ՏՏ ընկերություններին ավելի ակտիվ լինել ԵԱՏՄ-ի շուկայում ներգրավման գործընթացում՝ ընգծելով Հայաստանի զգալի ներուժը տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում:

Իր հերթին նա խոստացավ աջակցություն ցուցաբերել՝ ոլորտայի համագործակցությունը Հայաստանի հետ հզորացնելու հարցում:

Հայկական պատվիրակությունը նաև հյուրընկալվել է Տիեզերական գործունեության մասնակիցների միջազգային ասոցիացիայի («ՄԱԿԴ») նախագահ Վիկտոր Կրիվոպուսկովի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ժամանակ քննարկվեցին հնարավոր համագործակցության ուղղությունները: Վ. Կրիվոպուսկովի կողմից Գ. Վարդանյանին առաջարկվեց ՀՀ կառավարության հետ քննարկել հայկական ծագում ունեցող ՌԴ քաղաքացուն տիեզերագնացի կարգավիճակով տիեզերք ուղարկելու հնարավորությունն այն պայմանով, որ նա անհրաժեշտ պատրաստվածությունն անցնելուց հետո կստանա ՀՀ քաղաքացիություն և թռիչքը կիրականացնի, որպես ՀՀ ներկայացուցիչ: Հակառակ դեպքում ՀՀ քաղաքացուն թռիչքի համար պատրաստելու գործընթացը կարժենա 20 մլն. ԱՄՆ դոլար: Հետաքրքրվածության դեպքում անհրաժեշտ է մինչև ս.թ. ապրիլի 15-ը ներկայացնել մինչև 35 տարեկան ֆիզիկապես ուժեղ և առողջ 6 հոգու թեկնածություններ:

ՀՀ պատվիրակության Մոսկվա գործուղման ընթացքում նախարարի տեղակալ Գ. Վարդանյանը նաև հանդիպում ունեցավ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վարդան Տողանյանի հետ:

Հանդիպման ընթացում Գ. Վարդանյանը ներկայացրեց վերոնշյալ գերատեսչությունների և ընկերությունների հետ վերակազմավորվող նախարարության ոլորտներին առնչվող հնարավոր համագործակցությունը, նախագծերը և սպասելիքները:

Վ. Տողանյանն իր հերթին հայտնեց իր պատրաստակամությունը հնարավորության սահմաններում դիվանագիտական մակարդակով ակնկալվող աջակցության հարցում:

Յուրաքանչյուր հանդիպման ընթացքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գ. Վարդանյանը տեղեկացրել է ՀՀ կառավարությունում տեղի ունեցող կառոցվածքային փոփոխությունների մասին, մասնավորապես՝ վերոնշյալ Նախարարության փոխակերպումը ՀՀ բարձր տեխնոլոգիաների և արդյունաբերության նախարարության:

Փոխնախարարը նաև բոլորին հրավիրեց մասնակցել այս տարի Երևանում կայանալիք երկու կարևոր միջոցառումներին՝ հունիսի 24–26-ի «Ինժեներական շաբաթ»-ին և հոկտեմբերի 6–9-ի «WCIT–2019»-ին:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

Ռուսական կողմի յուրաքանչյուր պատվիրակության ղեկավարը հայտնեց պատրաստակամություն հայկական կողմից առաջարկվող համագործակցությունը զարգացնելու և խորացնելու վերաբերյալ, այդ թվում՝ ներկայացված նախագծերի շուրջ:

Որոշվեց, որ հայկական կողմը պաշտոնական գրությամբ կներկայացնի իր առաջարկությունները՝ համապատասխան ընթացք տալու նպատակով:

Հայկական կողմը նաև բոլորին կուղարկի պաշտոնական հրավերներ՝ ս.թ. հունիսի 24–26-ը «Ինժեներական շաբաթ»-ին և հոկտեմբերի 6–9-ը «WCIT–2019»-ին միջոցառումներին մասնակցելու վերաբերյալ:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Նախարարի տեղակալ՝ **Գեղամ Վարդանյան**

Արտաքին կապերի և ծրագրերի
վարչության պետի տեղակալ՝ **Վիոլետա Աղաջանյան**

01.04.2019թ.